

ԱՐԴՅՈՒՔ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ
ՈՒՍՍՈՒՆՔԸ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ
ՈԳԵՇՆՉՈՒՄ Է

[Հայերեն - Armenian – أرمني]



ՀԵՂ. Մ.Ա.Ս. ՔԵՅՎ

ԾԱՐՁ

Թարգմանությունը:

EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (EIRC)

& Աննա Ռ. Հակոբ

Ստուգող հանձնաժողով:

Աբու Առամ

هل عقيدة التثليث وحي إلهي؟



م. ا. ك. كيف



ترجمة:

المركز الأوروبي للدراسات الإسلامية

& أنا ر. يعقوب

مراجعة: أبو آرام

ՀԵՂԻՆԱԿԻ ՆՇՈՒՄՆԵՐԸ



1. Մեջբերումները Աստվածաշնչի Վերանայված Ստանդարտ Տարբերակից է, որոնք պատճենահանվել են բնօրինակ լեզուներից: Նշվում է սահմանված տարբերակը, Արքա Ջեյմսի Տարբերակը Մ.Թ.1611, վերանայված Մ.Թ. 1881-1885 և Մ.Թ.1901 և վերանայված Մ.Թ. 1946-1952 և Նոր Կտակարանի երկրորդ հրատարակությունը Մ.Թ.1971, հրատարակված ՈՒՎ. Քոլինգ Որդիներ և Ընկ., Կանադական Աստվածաշնչյան Հասարակության համար, 1835 Յոնգ Փողոց, Տորոնտո 7, Օնտարիո, Կանադա: Գոյություն ունեն նշումներ այլ տարբերակներից նույնպես:

2. Ղուրանական մեջբերումները վերցված են «Մուրբ Ղուրան»-ից, Աբդուլլահ Յուսուֆ Ալիի թարգմանությամբ. (Իմաստների և մեկնաբանությունների անգլերեն թարգմանությունը, վերանայված և հրատարակված Իսլամական Ուսումնասիրությունների Նախագահությամբ, Կոչ և Ուղղորդություն, Արքա Ֆարհադի Տպագրական համալիր, Սաուդյան Արաբիայի Թագավորություն):

3. Խ.Ա.Ո.Ն –ն «խաղաղությունը, Ալլահի ողորմածությունը նրան» խոսքերի հապավումն է, որը կիրառում են Ալլահի Մարգարեներին ողջունելու համար: Հետևաբար այն գործածում են որպես հարգալից ողջույն յուրաքանչյուր մարգարեյի համար, երբ հիշատակում են նրանց անունները: Խ.Ո.Ա.Ն նույնպես գործածում են, երբ նշում են երկու կամ ավել մարգարեների անուններ:

ՁՈՆ

Այս համեստ ուսումնասիրությունը ես ձոնում եմ Աստծուն, Ով իմաստություն է շնորհել ինձ, իմ կնոջը, Նենեթին, ով իմ սիրառատ և կամավոր օգնականն է և երեխաների հոգատար մայրը: Նա աստվածավախ և պարկեշտ կին է: Եվ իմ զավակներին իրենց խանդավառության և օժանդակության համար, իմ մերձավորներին, բարեկամներին իրենց հավատարմության համար և ի հիշատակ իմ ծնողների, ովքեր տառապել են իմ թուլություններից, մինչ տվել են ինձ իրենց համբերատարությունը և կապվածությունը:

Վերջապես ես այն ձոնում եմ իմ բոլոր ընկերներին և ծանոթներին իրենց խրախուսական բարի խոսքերի և այս գրքի անզիջում հրապարակման օժանդակության համար:

Մ.Ա.Ս. Քեյվ

Օգոստոսի 15, 1996 թվական

ԵՐԱԽՏԱԿԻՏՈՒԹՅՈՒՆ

Ամենայն խոնհարությամբ, ես երախտապարտ եմ Աստծո օրհնությանը, ով ինձ հնարավորություն է տվել երևան հանել այս գիրքը, այսպիսով իրականացնել իմ նվիրական նպատակը:

Ես իմ երախտապարտությունն եմ արտահայտում Մահմեդական Երիտասարդության Համաշխարհային Ժողովի Գլխավոր Քարտուղար Դոկ. Մանե Ալ- Ջոհանին, այս հետազոտական աշխատանքը հրատարակելու համար: Իմ անկեղծ երախտապարտությունը բոլոր բարյացակամ մարդկանց, ովքեր ամենայն արդարությամբ տրամադրեցին և օգնեցին ինձ այս աշխատանքի տեխնիկական մանրամասներով: Իմ անկեղծ երախտապարտությունը նրանց, ովքեր ջանասիրաբար և անկեղծորեն աշխատել են երևան հանել այս հրատարակությունը:

Թող Ամենակարող Ալլահը, Իր անսահման Ողորմածությամբ Իր օրհնությունը պարզևի նրանց բոլորին: Ամեն

Մ.Ա.Ս.Քեյվ

Աստվածաշնչի Ավետարանի (Հովհաննես 8:40) -ի մեջ Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) ասում է.

«Սակայն այժմ դուք փնտրում եք սպանել ինձ, Մարդու, ով ձեզ ճշմարտությունն է ասել, որը ես լսել եմ Աստծուց»:

Ալլահը (Աստված) Ղուրանի (Մուրա 'Ալ- Բուրան', 3:59) – ում ասում է.

Ալլահի առջև Հիսուսը նման է Ադամին, Նա, Աստված, արարել է Նրան

Ադամին, փոշուց, այնուհետ ասել է նրան. «Եղիբ» և նա եղել է:

Աստծո Եզակիության իրականությունը և բնույթը և Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) դերը ըստ Գրեթի.

Աստծո Մարմնավորման վերացման գաղափարը և Երրորդությունը չեն վարկաբեկում Հիսուսին, սակայն դնում են Աստծուն Իր վեհ, եզակի, բարձրյալ և անզուգական դիրքին, որպես միակ իրական Աստվածության, Որը արժանի է երկրպագության:

Հիսուս Քրիստոսը Աստված չէ, սակայն Աստծո մեծ Մարգարե և Առաքյալ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՒԿ ԶԼՄ-ՆԵՐԻ ԶԵԿՈՒՅՅՆԵՐԸ ՄԻԱՅՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ

ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ

ԻՆՉՊԵՍ Է ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾՎԵԼ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ

ԳՈՐԾՈՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱԶԴԵԼ ԵՆ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՎՐԱ

ԵՐՐՈՐԴԱԿԱՆՆԵՐԻ, ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱՑՈՒՄԸ
ՎԱՂ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ ՉԵՆ ՈՒՍՈՒՑԱՆԵԼ
ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՈՒՍՍՈՒՆՔԸ

ԱՐԴՅՈ՞Ք ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է
ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՈՒՍՍՈՒՆՔԸ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ
ՈՒՍՍՈՒՆՔԻ ՄԵՐԺՈՒՄԸ

ԱՍՏՈՈ ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԱՍՏՈՈ և ՀԻՍՈՒՄԻ
(Խ.Ա.Ո.Ն) ՄԱՍԻՆ

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՂՈՒՐԱՆԸ ԱՍՏՈՈ ՄԱՍԻՆ

ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՈՒՍՍՈՒՆՔԻ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՈՒՍՍՈՒՆՔԸ ԺԽՏՈՂ ԼՐԱՅՈՒՑԻՉ
ՓԱՍՏԱՐԿՆԵՐ

ԱՐԴՅՈ՞Ք ՀԻՍՈՒՄԸ (Խ.Ա.Ո.Ն)ՍԱՏԱՐՈՒՄ ԷՐ ՍՈՒՐԲ
ՀՈԳՈՒ ԳԱՂԱՓԱՐԻՆ

ԻՆՉ Է ՂՈՒՐԱՆԸ և ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՀԻՍՈՒՄԻ (Խ.Ա.Ո.Ն)և
ՆՐԱ ՄՈՐ ՄԱՍԻՆ

ՏԱՐՕՐԻՆԱԿ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

ԶԳՈՒՇԱՅՈՒՄ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԿԱՆԽԵԼ ԵՆ ԱՍՏՈՈ
ՈՒՂԵՐՉԸ

ՆՇՈՒՄՆԵՐ և ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

«Արդյո՞ք Երրորդության Ուսմունքը Աստվածային ոգեշնչում է» գրքի հրատարակումը մտածելու տեղիք է տալիս յուրաքանչյուր բանական մարդուն և ժամանակակից քրիստոնեությանը: Երրորդության ուսմունքը տարակուսանքի մեջ է գցել յուրաքանչյուր քրիստոնեական աղանդի: Չնայած Պարոն Մ.Ա. Ք. Քեյվը քրիստոնյա էր, ով նախկինում հավատում էր Երրորդությանը, երբ նա իրականացրեց ուսմունքի ծագման մասին իր ուսումնասիրությունը, ի զարմանս հայտնաբերեց, որ այն տարբեր քրիստոնյա հեղինակների և մտածողների բեղմնավորված և ձևավորված ավելի ուշ ժամանակաշրջանի զարգացում է:

Պարոն Մ.Ա.Ք. Քեյվը վկայեց, որ Երրորդությունը ոչինչ է քան մարդու արարած ուսմունք, որը հեռու է Աստծո հայտնություն լինելուց: Հետագայում, այս ձևավորված ուսմունքը կորցրեց իր անկյունավորությունը, հաշվի առնելով կառուցված հակասությունները և սպացուցեց Քրիստոնեական հիերարխիայի փշոտ կողմը ընդհանուր առմամբ և հոգևարականությանը մասնավորապես, ովքեր փորձում են նեցուկ լինել դրան:

Չնայած իր բոլոր թերություններին, արդարամիտ մարդու համար անընդունելի է պահպանել այս ուսմունքը: Լինելով ռացիոնալ, մարդը պետք է ավելի քննադատորեն մոտենա հոգևոր արժեքներին, որոնք կենսական են: Նա պետք է փորձի խորանալ մյուս կրոնական գրերի մեջ, որպեսզի գիտակցի համոզիչ ճշմարտությունը: Եվ, նախկինի պես, նա չպետք է թույլ տա իրեն դառնալ կույր հավատքի և ինքնահանգստացման զոհ: Փորձեք անդրադառնալ Գրերի տարբերակներին.

Ես կոչ եմ անում ընթերցողին անկողմնակալ և ճշմարտության հանդեպ բաց սրտով ուսումնասիրել այս գիրքը, որովհետև այն միակ ուղղին է, որը կարող է առաջնորդել ճշմարիտ որոշման, որը ձևավորում է մարդու կյանքը այս և հետագա աշխարհներում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ոչինչ չի վիրավորում քրիստոնյային այնքան, որքան նրանց հավատքի սկզբնաղբյուր հանդիսացող Երրորդության ուսմունքը կասկածի տակ առնելը: Քանի որ ես մեծացել եմ որպես քրիստոնյա, ես անգիր գիտեմ, որ այդ իրոք կվիրավորի քրիստոնեության իրական հետևորդին, մի բան որում նա համոզված էր: Սակայն լինել կույր, երբ ես ավելի լավ գիտեմ հեռու է առաքինությունից, քանի որ ես պարտավորված եմ Աստծո Պատվիրաններով, ուղղորդել նրանց, ովքեր շեղվել են կեղծ ուսմունքով: Յուրաքանչյուր անհատի հիմնական իրավունքն է գիտակցել ճշմարտությունը, որը կուղղորդի նրան ճիշտ ուղղու:

Հաստատված փաստ է, որ մարդը արարվել է որպես ռացիոնալ էակ, հետևաբար նա ունակ է պատճառաբանելու: Ըստ այդմ, մարդ միշտ ձգտում է փնտրել ճշմարտությունը: Ուստի, ինչպես անհատ, նա պետք է օբյեկտիվորեն պատճառաբանի ամենը իր բոլոր խոսքերով և արարքներով, որպեսզի հասնի իր նպատակին: Բացի այդ, նա համալրված է ընտրության ազատությամբ, որը նրան թույլ է տալիս հարմարվել քաղաքակիրթ հասարակության մեջ: Հավասարապես ճիշտ է, որ ոչ ոք իրավունք չունի նրան ստիպել ընդունելու նույնիսկ

ճշմարտությունը: Այնուամենայնիվ, լինելով ռացիոնալ գոռոզություն և համառություն է մերժել ճշմարտությունը: Սկզբունքային մարդը ոչ միայն ընդունում է նույնիսկ դատը ճշմարտությունը, այլև պատրաստ է ցանկացած հանգամանքերում պաշտպանել այն, նույնիսկ իր իսկ կյանքը զոհաբերելով:

Երրորդությունը այնքան խոր արմատներ է գցել քրիստոնյաների մեջ, որ հազվադեպ է ենթադրում «երեքը մեկ Աստծո մեջ» հետևանքները: Չնայած, որ աղբյուրը հեթանոս հավատքն է, նրանց մեծամասնությունը երբեք հարցի տակ չեն առել այդ ուսմունքի հավաստիությունը, տեղյակ չլինելով, որ այն կերտել է մարդը, այլ ոչ թե Աստծո ոգեշնչանքը: Երրորդության ուսմունքը հայտնում է.

«Հայրը Աստված է, Որդին Աստված է, Մուրբ Հոգին Աստված է և միասին, ոչ բացառապես, նրանք մեկ Աստծուց են: Երրորդությունը համահավերժ է, առանց սկզբի կամ ավարտի և համահավասար»:¹

Ըստ Երրորդականների, Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) ունի երկու բնույթ, մարդկային և աստվածային: Հավատում են, որ նա Աստծո Որդին և լիարժեք Աստված է և Երրորդության Ուսմունքի Աստվածայնության երկրորդն է:

Ամեն դեպքում, այս գրքի մեջ, ընթերցողները կարող են գտնել, որ որոշ հայտնված ճշմարտություններ դիտավորյալ աղավաղել են քրիստոնյա մտավորականները, դպիրները, աստվածաբանները, հեղինակները, ավետարանականները և եկեղեցիները, որպեսզի հայտարարեն Երրորդության

¹ Վիկտոր Պոդոս Ուայերուիլ. «Հիսուս Քրիստոսը Աստված չէ,» Ամերիկյան Քրիստոնեական Մամուլ, Միջազգային Ուղղի, Նոր Քնթավիլ 45871, 1975 և 1981 թվական, էջ.4

Ուսմունքը որպես «աստվածային ոգեշնչում»: Դրանից շատ առաջ, Մարգարե Երեմիան (Խ.Ա.Ո.Ն) զգուշացրեց մարդկանց Աստծո կրոնը ուսուցանողների արված կոռուպցիայի մասին, որը վերաբերում է հայտնությանը: Նա ասաց.

«Ինչպե՞ս եք դուք կարող ասել. «Մենք իմաստուն ենք և Տիրոջ օրենքը մեզ հետ է»: Սակայն զգուշացեք, դպիրների կեղծ գրիչը այն վերածել է ստի»: (Աստվածաշունչ, Երեմիա 8:8)

Ինչ վերաբերում է պաշտամունքի կեղծ գաղափարին, Մարգարե Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) կրկնեց մեզ Մարգարե Եսայու (Խ.Ա.Ո.Ն) զգուշացումը, սակայն մարդիկ, իրոք անուշադիր են: Նա ասաց.

«Այս մարդիկ պատվել են ինձ իրենց շրթունքներով, սակայն նրանց սրտերը հեռու են ինձանից. Մին են նրանք պաշտում ինձ, ուսուցանելով ուսմունքը ինչպես մարդկանց ցուցում»: (Մատթեոս 15:8 Աստվածաշունչ)

Իմ որոշումը ձեռնարկել տվյալ մտահաղացումը սերվել է Երրորդության գաղափարի ճշմարտության փնտրտուքից: Հետազոտությունները չէին սահմանափակվում միայն Գրերով, այլև տրակտատներով և հոգևոր գիտնականների հոդվածներով: Նրանց որոշ աշխատություններ, ապացուցեցին քրիստոնեական դավանանքներից սենսացիոն և հավաստի հավանություններ: Փաստորեն, գաղափարը ծագել է շոշափելի արդյունքների փնտրտուքից, որպեսզի ապացուցի իր իսկությունը, այլ ոչ թե շրջադարձը, հաշվի առնելով, որ իր սկզբնաղբյուրը Աստվածն է: Ավելի օրյեկտիվ լինելու համար, ես կիրառել եմ ինձ հասած տեղեկությունները:

Իրոք, այն իմ հոգեկան փնտրտուք էր, կշռելու վկայությունը, քանի որ նրանք թաքցնում էին իմաստը: Դժբախտաբար, երբ հետազոտությունը առաջընթաց ունեցավ, Երրորդության Ուսմունքը անցավ սերունդներին, քանի որ վերջնական ճշմարտությունը ավարտին մոտեցավ: Եթե արդյունքը լիներ շահեկան, այն կլուսավորեր իմ սիրտը: Ամեն դեպքում, ի սարսափ ինձ, ես այն սխալ գտա: Մարդու կերտած այս ուսմունքը մարդիկ մանրացրել են, որպեսզի ծառայեցնեն իրենց եսասիրական և թաքնված շահերին: Ուստի, բոլոր նախորդ պահանջները վերածվեցին կատարյալ կեղծիքի: Երրորդության Ուսմունքը ոչ միայն դեմ է Աստծո մարգարեների ուսմունքին, այլև վիրավորանք է մարդկային բանականությանը, որովհետև այն հակասում է պատճառին, որը գոյություն չունի Աստվածաշնչի ոչ մի հատվածի մեջ:

Վերջապես, դառը ճշմարտություն է, որ այն ոչնչացնում է Երրորդությունը և Մարմնավորման ուսմունքները, կապակցված բոլոր հավատքների հետ միասին: Աստծուն, ըստ Իր լուսաբանված Ուղորդության երկրպագելու համար, պետք է անկեղծորեն ժխտել դրանք:

Մարմնավորված Աստծո և Երրորդության չեղյալ համարելը չի նվաստացնում Հիսուսին, այլ բարձրացնում է Աստծուն Իր բարձր, եզակի, բարձրյալ և անզուգական դիրքին, որպես միակ իրական Աստվածության, ով արժանի է երկրպագության: Հիսուս Քրիստոսը Աստված չէ, այլ մեծ Մարգարե և Աստծո Առաքյալ:

Ես նշում եմ «մեկ և ամբողջ», որպեսզի իմ աշխատության մեջ փնտրեմ ճշմարտությունը, որը կարող է բացել նրանց սրտերը, ովքեր փրկության են սպասում:

«Մեր Աստված. Այս աշխատության միջոցով մենք ձգտում ենք մարդկությանը փոխանցել Քո Ուղերձի իրական իմաստը: Մեր Տեր, պարզևիր նրանց Քո օրհնությունը և ուղղորդությունը դեպի ճշմարտություն: Որտեղ որ մենք սխալվել ենք, խնդրում ենք ներել մեզ և մարդկանց պաշտպանել մեր թերություններից»: Ամեն

ՀԱՏՈՒԿ ԶԼՄ-ՆԵՐԻ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԸ ՄԻԱՑՅԱԼ

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Անգլիական եկեղեցու եպիսկոպոսների շոկային հետազոտությունը

Շոկը պատեց ամբողջ Անգլիան և Քրիստոնեական աշխարհը, երբ «Անգլիական եպիսկոպոսների շոկային հետազոտությունը» վերնագրով զեկույցը հայտնվեց Դեյլի Նյուզ ամսագրի մեջ . ըստ որի Անգլիայի անգլիկան եպիսկոպոսների ավելի քան կեսը համաձայն են, որ «Քրստոնյաները պարտավոր չեն հավատալ, որ Հիսուս Քրիստոսը Աստված է»: Հարցումի արդյունքում 39 եպիսկոպոսներից 31-ը մերժում են Հիսուսի Աստվածությունը և Հարությունը, այսպիսով ամբողջովին անվավեր են համարում հիմնական Քրիստոնեական երկու ուսմունքները

Նրանք այս դարավոր ուսմունքները վերագրում են Աստվածաշնչի անճշտություններին:²

² Անգլիկան Եպիսկոպոսների Շոկային Հետազոտությունները. Դեյլի Նյուզ Մեծ Բրիտանիա 25/6/84 (աղբյուր Իսլամական Միջազգային

ՈՉ ԱՍՏՎԱԾ ԱՅԼ «ԱՍՏՈՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ»

Հետագայում զեկույցը հայտնեց, որ 31 եպիսկոպոսներից 19-ը համամիտ են, որ.

«Բավարար է Հիսուսին համարել ինչպես «Աստծո Գերագույն Ներկայացուցիչ»:³

ԱՅՍՊԻՍՈՎ, ԱՆԳԼԻԱՅԻ ԱՆԳԼԻԿԱՆ
ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԱՎԵԼԻ

ՔԱՆ ԿԵՍԸ ԱԶԱՏՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԱՆԱՐԳԱՆՔԻՑ և
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻՑ ՀԻՍՈՒՍԻՆ – ՈՐՊԵՍ ՄԻԱՅՆ
ԱՌԱՔՅԱԼԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍ ՋԵՆՔԻՆՍԸ ՔՆՆԱԴԱՏՈՒՄ Է
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՍՍՈՒՆՔՆԵՐԸ

Լոնդոնի Կիրակնօրյա հեռուստատեսության կրոնական «ՔՐԵԴՕ» ծրագրի զեկույցի ժամանակ, նորանշանակ եպիսկոպոս Դուրբանը, - Պրոֆեսոր Դավիթ Ջենկինսը, ով հանդիսանում է Անգլիայի Եկեղեցու չորրորդ բարձրաստիճան ներկայացուցիչը – Գրոհեց Քրիստոնեության ամբողջ կառուցվածքի վրա հիմնված տատանվող հիմքին: Եպիսկոպոսը քննադատեց Հիսուսի ԱՍՏՎԱԾԱՅՆՈՒԹՅԱՆ և ՀԱՐՈՒԹՅԱՆ հիմնական

տարածման կենտրոն, 20 Գրին Լեյն, Սմոլ Հիթ, Բիրմինգհամ B 9 5 DB, հեռ. 021-773-0137)

³ Եպիսկոպոս Ջենքինսը Հանդիմանում է Քրիստոնեական Ուսմունքը. Լոնդոն Դեյլի Մեյլ էջ. 12,15 /7/84 (աղբյուր Իբիդ)

Քրիստոնեական ուսմունքները, արտահայտելով, որ Հիսուսի կյանքի վաղ առաքելության իրադարձությունները .«Ուղղակիորեն սխալ էին, քանի որ վաղ Քրիստոնյաները դրանք ավելացրել էին, որպեսզի արտահայտեին Նրա փրկիչ լինելու իրենց հավատքը»:⁴

Աստծո և Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) այս գաղափարը կիսում են բոլոր առաքյալները, վաղ, հին և ժամանակակից քրիստոնեական գիտնականները, մտավորականները, հեղինակները և նույնիսկ հասարակ քրիստոնյաները: Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) ասաց. (Մատթեոս 4:10, Աստվածաշունչ.)

«... քանզի գրված է, «Դուք պետք է երկրպագեք Տիրոջը, ձեր Աստծուն և Նրան միայն դուք պետք է ծառայեք»:

Նա ասում է. «Եվ այս հավերժ կյանք է, որ նրանք ճանաչեն նրան, միակ իրական Աստծուն և Հիսուս Քրիստոսին, ում դուք ուղարկել եք»: (Աստվածաշունչ, Հովհաննես 17:3)

Կրկին նա ասում է .«... ես ձգտում եմ իմ Հորը և ձեր Հորը, իմ Աստծուն և ձեր Աստծուն»: (Հովհաննես 20:17, Աստվածաշունչ)

Արդյո՞ք այս հայտարարությունները պարզ չեն: Որտեղի՞ց է եկել Հիսուսին (Խ.Ա.Ո.Ն) Աստված ընդունելու միտքը:

Այժմ, ծագում է բիլիոն դոլար արժողության հարցը. «Արդյո՞ք Երրորդության Ուսմունքը Աստվածային Ոգեշնչում է»:

⁴ Լոնդոն Դեյլի Մեյլ Մեծ Բրիտանիա էջ. 12, 15 / 7 /84, (Իբիդ)

ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ

Ամբողջ աշխարհում մոտ բիլիոն մարդ շարունակում է հավատալ և կիրառել Երրորդության ուսմունքը, մինչդեռ նրանց կրկնակին, եթե ոչ ավելին, ամբողջովին ժխտում է, ասելով, որ այն աստվածաշնչային չէ, այլ միայն մոլոր, անհիմն, անիմաստ, զարշելի և պատճառաբանություններից զուրկ :

Իր «Քրիստոնյաները» գրքի մեջ, Բամբեր Գասքոյնը ասում է. Սկզբնական հիսուն տարիների ընթացքում, ինչ մենք այժմ կոչում ենք Քրիստոնեական Դարաշրջան, որևէ փաստաթղթի մեջ ոչ մի խոսք չի պահպանվել Քրիստոսի կամ նրա հետևորդների մասին: Հաջորդող հիսուն տարիների ընթացքում, Քրիստոնյաները իրենք են գրել գրքերի մեծամասնությունը, որը այժմ կազմում է Նոր Կտակարանը: Եվ կրկին ոչ մի խոսք, մեկ փոքր բացառությամբ, որևէ արտաքին հեղինակի: Եվ, այնուհետ, երկրորդ դարում, Հռոմեական հեղինակները սկսեցին մեկնաբանել.⁵

«Գոյություն ունի մի խումբ, ովքեր ասելի են իրենց զարշանքով, կոչվում են Քրիստոնյաներ, իրենց մարդկանց կողմից: Քրիստոսը, ումից եկել է անունը, տառապել է ծայրահեղ պատիժ Թիբերիոսի գահակալության օրոք, մեր պաշտոնյաներից մեկի Պիղատոսի կողմից»: (Թակիտոս)

«Քրիստոնյաները մարդկանց մի դաս են, ում տվել են նոր և թույլ սնոտիապաշտություն»: (Սոթիոնիոս)

⁵ Բամբեր Գասքոն. «Քրիստոնյաները», Գրանադա Հրատարակչություն, 1976, Ֆրոզմոր, Սուրբ Ալբանս, Հերզ AI2 2NF և 3 Վերին Ջեյմս Փողոց, Լոնդոն Wir 4 BP, էջ.9

«Խեղճ ստահակները համոզել են իրենց, որ նրանք պատրաստվում են դառնալ անմահ և ապրել ամբողջ ժամանակ, երկրպագելով խաչված փիլիսոփայի և ապրելով ըստ նրա օրենքների: Հետևաբար, նրանք արհամարհել են այս աշխարհի բարիքները և համարել են իրենց հասարակ սեփականություն: Նրանք ստացել են այս ուսմունքը սովորությամբ, առանց որևէ որոշակի վկայության: Այսպիսով, եթե որևէ բուժակ կամ խաբեբա գալիս է նրանց մոտ, նա արագորեն ունեցվածք է ձեռք բերում, պարտադրելով այս պարզ ժողովրդին»: (Լուչիան)

Այնուամենայնիվ, Քրիստոնեությունը ծաղկեց և դարձավ մեկ մեծ կրոն, սակայն, Ժամանակակից Քրիստոնեության ուսմունքները, ինչպիսին որ մենք գիտենք, տարբեր են նրանից, ինչ ուսուցանել է Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) իր աշակերտներին: Քրիստոնեության տարբեր ուսմունքները, ինչպիսին է Երրորդությունը, հետագա զարգացման արդյունք է: Սկիզբը դրվեց Կայսր Կոստանտինոս Մեծի գահակալության օրոք Նիկիայում և ավելի ուշ, 381 թվականին Թեոդոսիոս Կայսրի օրոք, զարգացավ լիարժեք ուռճացած դոգմայի: Ինչ տարօրինակ է: Այնուհետ, Քրիստոնեությունը բազմապատկվել է շատ տարբեր աղանդների և այժմ ճանաչել իրական Քրիստոնեական հավատքը դժվար է: Սակայն ինչ որ է, ժամանակակից կոնտեքստի մեջ, ոչ մեկը մոտիկ չէ մարգարեների բնօրինակ ուսմունքներին: Նրանք իրենց ուսմունքների հիմք են վերցնում Աստվածաշունչը, որը շարունակական վերանայման առարկա է:

Միայն Աստված գիտի, թե երբ են կարող քրիստոնյաները ներկայացնել իրենց Գրի, Աստվածաշնչի ճիշտ, վավերական կրկնօրինակը:

Զարմանալի է այսօրվա շրջանառության մեջ գտնվող Աստվածաշնչյան տարբերակների քանակը: Յուրաքանչյուրը մյուսից տարբեր է, չնայած յուրաքանչյուրը հայտնում է իր բնօրինակ լինելը: Նրանք հայտնել են աշխարհին, որ իրենցն է Աստծո ոգեշնչումը: Նրանց պատրաստի հղումը Աստվածաշնչի, Տիոթեոս Բ 3:1 –ի մեջ է, որը ասում է. «Բոլոր գրերը ոգեշնչել է Աստված...» Սակայն, ինչ քրիստոնյաները չեն հասկանում այն է, որ «Էականորեն, իրենց Աստվածաշնչերի բովանդակությունները գրեր չեն, այլ միայն պատմություններ, հաշիվներ, իրադարձություններ և սովորույթներ»: Խնդիրը դարձավ ավելի խճճված, երբ տեղեկացանք, որ Աստվածաշնչի որոշ տարբերակներ պարունակում են ավելի գրքեր, քան մյուսները: Ուղղափառ Տարբերակը պարունակում է 86 գիրք, Խարիզմատիկ տարբերակը 76 գիրք, Հռոմեական Կաթոլիկ Տարբերակը 73 գիրք և բոլոր Բողոքական տարբերակները 66 գիրք, ներառելով Սուրբ Գրի Նոր Համաշխարհային թարգմանությունը, 1984 թվականին, որը կիրառում են Եհովայի վկաները և այլ տարբերակներ, ինչպիսիք են Արքա Ջեյմսի 1611-1942, Ամերիկյան Ստանդարտի 1901-1944, Վերանայված Ստանդարտի 1971 Երկրորդ Հրատարակություն Երուսաղեմի Աստվածաշնչի 1966, Ավետիսի Աստվածաշնչի – Մերօրյա Անգլերեն Տարբերակի 1976, Սուրբ Աստվածաշնչի 1954, տպագրված 1956, Ռոնալդ Ա. Քնոքս, Նոր Միջազգային Տարբերակը և անհաշիվ այլ տարբերակներ:

Ավելին, ինչ կասեք 1952 թվականի վերանայված հրատարակչության մեղադրանքների մասին, որոնք տարբերակել են Աստվածաշնչի Վերանայված Տարբերակի խմբագիրները և Նոր Կտակարանի, Երկրորդ

Հրատարակության 1971 Ուիլյամ Քոլինգ Ռոդիներ և Ընկ., հրատարակված Կանադայի Աստվածաշնչյան Հասարակության կողմից, որը իր նախաբանի մեջ ասում է

1. «Մակայն, Արքա Ջեյմսի Տարբերակը ունի մեծ արատներ... այս արատները այնքան շատ են և այնքան լուրջ, որպեսզի կոչվեն Անգլերեն Թարգմանության վերանայում»:

2. «Նոր Կտակարանի արքա Ջեյմսի տարբերակը հիմնված է Հունական տեքստի վրա, որը հաղորդվել է սխալներով» Ինչ կասեք Եհովայի Վկաների մեղադրանքների մասին, որը զետեղվել է 1951 սեպտեմբերին, իրենց Արթուն հրատարակության մեջ, որը ասում է. «Աստվածաշունչն ունի 50,000 սխալ»:

Եվ, ինչ կասեք, եթե ասեմ, որ հակառակ մեր հավատքների «չորս Ավետարանների հեղինակներից ոչ մեկը չի հանդիսացել Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) աշակերտ»: Աստվածաշնչի Ղուկաս 6:14-16 և Մարկոս 3:17-ի մեջ մենք գտնում ենք տասներկու աշակերտների անունները, ում նշել է Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն): Այն ժամանակ, երբ Մատթեոսի և Հովհաննեսի անունները ներառվել են, Մարկոսի, Ղուկասի և Պողոսինը նշված չեն:

Ամեն դեպքում, ելնելով հետևյալ մեջբերումներից, դուք կարող եք տեսնել, որ համապատասխանաբար Մատթեոսին և Հովհաննեսին վերագրված երկու Կտակարանները գրառել են երրորդ անձիք: Ընթերցեք տարբերակի վերարտադրությունը Աստվածաշնչի Մատթեոս 9:9 մեջ.

«Մինչ Հիսուսը անցնում էր այնտեղից, նա տեսավ մի տղամարդ, որի անունը Մատթեոս էր, ով նստած էր

հարկերի տանը և նա ասաց նրան. «Հետևիր ինձ»: Եվ նա ոտքի կանգնեց և հետևեց նրան»:

Աստվածաշնչի, Հովհաննես 21:23-ն ասում է .

«Այս այն աշակերտն է, ով վկայություն է տալիս այս բաներին և ով գրառել է այս բաները և մենք գիտենք, որ այս վկայությունը ճշմարիտ է:

Առաջին հերթին հեղինակը հազիվ է հաղորդում, թե ինչ է պատահել Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) և տղամարդ Մատթեոսի միջև, մինչդեռ, երկրորդ հերթին ակնհայտ է, որ «Մենք» դերանունը հանդես է գալիս, որպես հեղինակ:

Եկեք այժմ արտացոլենք այն, ինչ ասում են Քրիստոնյա երկու գիտնականները Աստվածաշնչի կայացման մասին.

«Դպիրը երբեմն չէր դնում այն, ինչ տեքստի մեջ էր, այլ այն ինչ նա սովորել էր, ինչ պետք է լիներ: Նա պետք է վստահեր անկայուն հիշողությանը, կամ նա պետք է տեքստերը համապատասխանեցնեք այն Դպրոցի հայացքներին, որին նա էր պատկանում: Որպես լրացում Քրիստոնյա Հայրերի տարբերակներին և մեջբերումներին, հայտնի է, որ գոյություն ունեն Ավետարանի մոտ չորս հազար Հունական Գրեր: Որպես արդյունք, զգալի է ընթերցման բազմազանությունը»:⁶

«Այսպիսով, ներկայանում են Ավետարանները, որոնք պարզորոշ արտացոլում են համայնքի գործնական

⁶ Ջ.Ռ. Դումեյլով. Սուրբ Աստվածաշնչի մեկնաբանություն էջ. 16 - (տես – Տիկին Ուլֆաթ Ազիզ- Ուս- Սամադ. «Իսլամը և Քրիստոնեությունը», 1984, Իսլամական Հետազոտությունների նախագահությունը և Քարոզչությունը, Ռիադ, Սաուդյան Արաբիայի Թագավորություն էջ. 7)

կարիքների գաղափարը, որի համար դրանք գրվել են: Կիրառվել են ավանդական նյութեր, սակայն որևէ տատանում գոյություն չունեն փոփոխելու կամ լրացնելու, կամ բաց թողնելու այն, ինչը չէր համապատասխանում հեղինակի նպատակին»:⁷

ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Երրորդության ուսմունքը ենթադրում է մեկ Աստված երեք Անձի մեջ: Նրանցից յուրաքանչյուրը անսկիզբ, հավերժ գոյություն է: Յուրաքանչյուրը օգնություն է Ամենակարողին, ոչ ավել կամ պակաս քան մյուսները, յուրաքանչյուրը պետք է լրացնի Աստծուն, բառի ամեն իմաստով, որը ներառում է Աստծո ածականները և բոլորը հավասար են ժամանակի, դիրքի, հզորության և գիտելիքի մեջ: Այս ուսմունքը կազմում է Քրիստոնեության հավատքի սյունը, որը պաշտպանում են համարյա բոլոր Քրիստոնեական դավանանքները: Ամեն դեպքում, Երրորդության ուսմունքը Աստծու ոգեշնչումը չէ, այն մարդու կերտած ուսմունք է, որը քրիստոնյաները սահմանել են 4 դարի վերջին քառորդի ընթացքում: Փաստորեն, այն 381 թվականի Կոնստանտինոպոլսի Համագումարի արդյունք է, որը համաձայնեց հավասարեցնել Սուրբ Հոգին Աստծո և Հիսուս Քրիստոսի դիրքին:

Քրիստանիկա Հանրագիտարանը հայտնում է, որ աստվածային Լոգոսի և Հայր Աստծո հետ էության միության գաղափարը, հաստատում է Հիսուս Քրիստոսի

⁷ Թ.Ջ Թուկեր. Քրիստոնյայի պատմությունը ժամանակակից գիտության լույսի ներքո, էջ. 320 (Իբիդ, էջ.6)

կատարյալ աստվածությունը: Հիսուս Քրիստոսի անձի առեղծվածը կարելի է ըմբռնել մեկ բանաձևով. Երկու բնույթ մեկ անձի մեջ... Հիմնականում, չբխելով վերացական ուսմունքից, այն ավելի շուտ փոփոխվում է պատարագի և երկրպագության անհաշիվ հիմների յուրաքանչյուր նոր ձևերի մեջ, ինչպես Զատիկի պատարագի խոսքերն են.

«Երկինքների արքան հայտնվեց երկրի վրա ի շնորհիվ իր բարության դեպի մարդկությունը և մարդու հետ նա կապվեց: Քանի որ նա իր մարմինը առավ անբիժ կույսից և նա ծնվեց նրանից, որ նա ընդունել է այն: Առաջինը Որդին է, կրկնակի էության մեջ այլ ոչ թե անձի: Ուստի հայտարարելով նրան ինչպես ճշմարիտ կատարյալ Աստված և կատարյալ մարդ, մենք խոստովանում ենք, որ Քրիստոսը մեր Աստվածն է»:⁸

ԱԹԱՆԱՍՅԱՆ ԴԱՎԱՆԱՆՔԸ ՆՇՈՒՄ Է.

«Գոյություն ունի Հոր մեկ անձ, մեկ այլ Որդու և մեկ այլ Սուրբ Հոգու: Սակայն Հոր, Որդու և Սուրբ Հոգու ամբողջ Աստվածայինը մեկն է . Փառքը հավասար, Վեհությունը համահավասար.... Հայրը Աստված է, Որդին Աստված է և Սուրբ Հոգին Աստված է: Եվ, մինչդեռ գոյություն չունեն երեք Աստվածներ, սակայն մեկ Աստված...Քանի որ,ինչպես ըստ Քրիստոնեական ճշմարտության մենք ստիպված ենք ընդունել յուրաքանչյուր անձ որպես ինքն իրեն Աստված կամ Տեր, այնպես էլ, ըստ Կաթոլիկ կրոնի, մեզ արգելվում է

⁸ Բրիտանիկա Հանրագիտարան, Մաքրոպեդիա, հատոր 4 Քրիստոնեություն էջ. 481

ասել, որ գոյություն ունեն երեք Աստվածներ, կամ երեք Տեր»:⁹

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ և ԱԹԱՆԱՍՅԱՆ ԴԱՎԱՆԱՆՔԻ ՈՒՂՂԱՓԱՌ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ .
«Երրորդության ուսմունքը հայտնում է, որ Հայրը Աստված է, Որդին Աստված է, Սուրբ Հոգին Աստված է և միասին, ոչ բացառապես, նրանք կազմում են մեկ Աստված: Երրորդությունը համահավերժ է, անսկիզբ կամ անավարտ և համահավասար»:¹⁰

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԱՑԻՆ ՀԱՅՏՆՈՒՄ Է.
Երրորդությունը տերմին է, որը աշխատում է կարևորել Քրիստոնեական կրոնի կենտրոնական ուսմունքը.... Մինչդեռ Հունական Ուղղափառ Եկեղեցին Երրորդությունը կոչում է, «Քրիստոնեության հիմնական ուսմունք, ասելով. Քրիստոնյաները նրանք են, ովքեր Քրիստոսին ընդունել են որպես Աստված»: Նույն եկեղեցին «Մեր Ուղղափառ Քրիստոնեական Հավատքը» գրքի մեջ հայտարարում է. «Աստված եռակի է : Հայրը լիովին Աստված է: Որդին լիովին Աստված է: Սուրբ հոգին լիովին Աստված է»:¹¹

⁹ Տիկ. Ուլֆաթ Ազիզ – Ուս- Մամադ. Իսլամը և Քրիստոնեությունը, 1984, Իսլամական Հետազոտությունների նախագահությունը և Քարոզչությունը, Ռիադ, Սաուդյան Արաբիայի Թագավորություն, էջ. 29

¹⁰ Ի. Ուիլիամ Ուիլսոն Սթիվենս, Քրիստոնյա Կրոնի Ուսմունքը, Գրանդ Ռափիդս. Ու. Բ Էյդմանսի Հրատարակչատուն 1967, էջ. 113-122 (Տես – Վիկտոր Պոդոս Ուայերուիլ. Հիսուս Քրիստոսը Աստված չէ, Ամերիկյան Քրիստոնեական Մամուլ, Միջազգային Ուղղի 1975-1981, Նյու Քնքսուիլ, Օհայո 45871 էջ. 5)

¹¹ Փենսիլվանիայի Աստվածաշնչի և Ուղղու Հասարակություն. Արդյո՞ք դուք պետք է հավատաք Երրորդությանը (1989), Միջազգային

ԻՆՉՊԵՍ Է ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾՎԵԼ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ՈՒՍՍՈՒՆՔԻ

Հռոմեական կայսրերի քրիստոնյաների հետապնդումները և վաղ Եկեղեցու ճնշումը, որը սկիզբ առավ առաջին դարում, ավարտվեց 312 թվականի Միլվիան կամրջին Կոնստանտին Մեծի իշխանության գալով: Հետևաբար, շնորհիվ Քրիստոնեության դարձի, մարդիկ ստանում էին քաղաքական, զինվորական և սոցիալական շահերի հատուկ առաջարկներ: Արդյունքում, հազարավոր ոչ Քրիստոնյաներ միացան Եկեղեցուն և Կոնստանտինը հնարավորություն ստացավ Եկեղեցական հարցերում մեծ իշխանություն ձեռք բերել:

Կոնստանտինի գահակալության օրոք թափ ստացավ այն գաղափարը, որ Հիսուս Քրիստոսը Աստծուն համահավասար է: Մինչդեռ, այդ ժամանակ Երրորդությունը հաստատված ուսմունք չէր: Երեք աստծո գաղափարը մեծ հակասություն բերեց Եկեղեցու շրջանում, մինչ այժմ շատ հոգևորականներ և աշխարհիկ մարդիկ չեն ընդունում Քրիստոսի որպես Աստծո դիրքորոշումը:¹²

Այս անհամաձայնությունը առճակատման է բերել Եգիպտոսի, Ալեքսանդրիայի Եպիսկոպոս Ալեքսանդրի և

Ուսանողների Աստվածաշնչյան Կազմակերպություն, Բրուկլին, Նյու Յորք ԱՄՆ P 3

¹² Վիկտոր Պոդոս Ուայերուիլ, Հիսուս Քրիստոսը Աստված չէ, Ամերիկյան Քրիստոնեական Մամուլ, Միջազգային Ուղղի, Նյու Քեմբրիջիլ, Օհայո 45871 (1975-1981) էջ. 22-23

նրա քահանա Արիուսին: Եպիսկոպոս Ալեքսանդրը ուսուցանում էր, որ Հիսուսը հավասար է Աստծուն, սակայն Արիուսը, ոչ: Այսպիսով, 321 թվականի Ալեքսանդրիայում տեղի ունեցած սինոդի ընթացքում, Արիուսին գահընկեց արեցին և պաշտոնապես հեռացրեցին եկեղեցուց:¹³

Հաստատության դեմ Արիուսի ուսուցումը Եգիպտոսում, մինչ այժմ մեծ աջակցություն ունի: Շատ կարևոր եպիսկոպոսներ, ինչպիսիք են ուսանած պատմաբան Եսոբիուսը Պաղեստինյան Կեսարիայից և նրա հզոր անվանակից Եսեբիուս, Նիկոմեդիայի եպիսկոպոսը, աստվածաբանորեն համամիտ են Արիուսի հետ, Հիսուս Քրիստոսը Աստված չէ:¹⁴

Կայուն տարաձայնությունները անհանգստացրեցին Կոնստանտինին և իր դիրքորոշումը օրինականացնելու համար, 325 թվականի մայիսին, Քրիստոնեական Եկեղեցիների բոլոր եպիսկոպոսներին նա հրավիրեց Նիկիա, որը այժմ գտնվում է Փոքր Ասիայում: Ուստի, Նիկիայի Խորհուրդը, սկսեց կարգավորել Աստծո և Նրա Որդու հարաբերությունների հետ կապված վեճը: Կոնստանտինը, ով ընթացքի պատասխանատուն էր, գործի դրեց իր քաղաքական հզորությունը, որպեսզի համոզի եպիսկոպոսներին ընդունել իր աստվածաբանական դիրքորոշումը: Համոզմունքը, որը ստորագրեցին 218 եպիսկոպոս, պարզորեն հակա –Արիական էր: Այլ կերպ, Նիկիայի համոզմունքը հաստատեց Որդու համահավասարությունը Աստծուն: Եպիսկոպոսներից

¹³ Հազե, Քրիստոնեական Եկեղեցու պատմություն, էջ.111 (Տես Իբիդ, էջ. 23)

¹⁴ Հենրի Չադուիկ, Վաղ Եկեղեցին (Գրանդ ռափիդս, Ուիլ. Բ. Եսարդմանս Հրատարակչատուն 1968) էջ. 129 (Տես – Իբիդ էջ. 23)

երկու հարյուր տասնութը ստորագրեցին այս համոզմունքը, չնայած այն իրականում փոքրամասնությունների աշխատանքն էր:¹⁵

Բրիտանիկա Հանրագիտարանը եզրակացրեց Նիկիայի Խորհրդի արարքը հետևյալ կերպ.

325 թվականի մայիսի 20-ի տեղի ունեցավ Նիկիայի Խորհուրդը: Կոնստանտինը ինքն էր նախագահում, ակտիվորեն ղեկավարելով քննարկումը և անձամբ առաջարկելով, կասկածի տակ չառնելով Օսիուսի հուշումը, խորհրդում Քրիստոսի և Աստծո հարաբերության բանաձևի կարևորության արտահայտումը «մեկ էություն Հոր հետ»: Կայսրից ցնցված, եպիսկոպոսները, միայն երկու բացառությամբ, ստորագրեցին համոզմունքը, նրանցից շատերը ընդդեմ իրենց ցանկության:

Կոնստանտինը Նիկիայի որոշումը համարեց Աստծուց ողբեջնչված: Քանի դեռ նա կենդանի էր, ոչ ոք համարձակություն չունեցավ բացահայտորեն մարտահրավեր նետել Նիկիայի Համոզմունքին, սակայն սպասված համախոհությունը չհետևեց:¹⁶

¹⁵ Հենրի Բեթենսոն, Քրիստոնեական Եկեղեցու Փաստաթղթերի խմբագիր, 2 –րդ խմբագրություն (Լոնդոն, Օքսֆորդի Համալսարանական Մամուլ 1963 էջ. 58 «Արիուսը և նրա հետևորդները անմիջապես անցնում են Սիրիա և նրա աշխատությունները այրվում են: Արիուսի այս վերաբերմունքի արձագանքները խոր ազդեցություն են թողնում Եկեղեցու վրա, ինչպես նաև Կոնստանտինի, մի քանի տասնամյակներ: Անմիջապես այն բանից հետո, երբ Կոնստանտինը ներում է շնորհում Արիուսին և վերականգնում է Եկեղեցում, նա կնքում է մահկանացուն»: (Տես Իբիդ. էջ. 24)

¹⁶ Բրիտանիկա Հանրագիտարան, 1968 «Նիկիայի Հանձնաժողովը»: (Տես –Իբիդ էջ. 24-25)

Նիկիայի Համոզմունքը

Մենք հավատում ենք մեկ Աստծուն, Գերագույն Հորը, տեսանելիի և անտեսանելիի արարչին; Եվ մեկ Տիրոջ, Հիսուս Քրիստոսին, Աստծո Որդուն, միածին Հոր, միայն միածին, այսինքն, Հոր էություն, Աստծո Աստված, Լույսի Լույս, ճշմարիտ Աստծո ճշմարիտ Աստված, միածին, ոչ արարված, մեկ էություն Հոր հետ, որի միջոցով է ամենը արարվել, ամենը երկնքի մեջ և ամենը երկրի վրա, ով մեզ համար մարդ և մեր փրկության համար է իջել և դարձել մարմին և դարձել մարդ, տառապել և երրորդ օրը բարձրացել, համբարձվել երկինքներ, եկել է դատելու կենդանի և մահացածների:

Եվ Սուրբ Հոգու,

Եվ նրանց, ովքեր ասում են. «Այնտեղ էր, երբ նա գոյություն չուներ», և «մինչ միածին լինելը նա գոյություն չուներ,» և որ «Նա եկավ գոյության, ինչից չէր; կամ նրանք, որ պնդում են, որ Աստծո որդին »այլ էություն և նյութ է՝

Կամ՝ արարված՝

Կամ՝ փոփոխական՝

Կամ՝ անփոփոխ՝

Կաթոլիկ և Առաքելական եկեղեցին անիծել է սրանք:

Նիկիայի՝ Համոզմունքը

Բեթենսոնը, Նիկիայի Համոզմունքը բացատրում է հետևյալ կերպ.

Այն գտնվել է Էփիֆանիուս, Անկորատոսում, 118, 374 թվականին և համարյա բառ առ բառ գիտնականները քաղել են Երուսաղեմի Ս. Սիրիլի Կաթեչեթիկյան Դասախոսություններից, որը ընթերցել և հաստատել են Չալսեդոնում, 451 թվականին, որպես համոզմունք 318 հայրերի համոզմունք, ովքեր հանդիպել են Նիկիայում և նրանց 150-ի, ովքեր հանդիպել են ավելի ուշ ժամանակաշրջանում, այսինքն Կոնստանտինոպոլիտանականում, 381 թվականին: Ուստի հաճախ կոչվում է Կոնստանտինոպոլիտական կամ Նիկաենո-Կոնստանտինոպոլիտական համոզմունք և շատերի կարծիքով հանդիսանում է Երուսաղեմի համոզմունքի վերանայումը, որը տեղի է ունեցել Սիրիլում:

Մենք հավատում ենք մեկ Աստծո, Ամենի ինքնիշխան Հոր, երկնքի և երկրի արարչին և տեսանելիի, և անտեսանելիի:

Եվ մեկ Տիրոջ, Հիսուս Քրիստոսի, Աստծո միակ միածին Որդու, բոլոր ժամանակների Հոր Միածնի, Լույս Լույսի, Ճշմարիտ Աստծո Ճշմարիտ Աստված, միածին ոչ թե արարված, հոր հետ մեկ էության, որի միջոցով ամենը արարվել է, ով մեզ համար մարդ է և մեր փրկության համար է իջել երկինքներից և դարձել է Սուրբ Հոգու և Կույս Մարիամի մարմին և դարձել է տղամարդ և խաչվել է մեզ համար Պիղատոսի օրոք, և տառապել և հուղարկավորվել է և ըստ Գրերի, երրորդ օրը հարություն է առել և համբարձվել է երկինքներ և նստել է Հոր աջ ձեռքի մոտ և կրկին եկել է փառքով դատելու կենդանի և մահացած, ում թագավորությունը այնտեղ չունի ավարտ.

Եվ Սուրբ Հոգու, Տիրոջ և Կյանք տվողին, որը ծագել է Հորից, ով Հոր և Որդու հետ միասին երկրպագության և փառքի է արժանի, ով խոսեց մարգարեների միջոցով.

Մեկ սուրբ Կաթոլիկ և Առաքելական Եկեղեցու.

Մենք ընդունում ենք մեղքերի թողության մեկ մկրտություն:
Մենք փնտրում ենք հարություն մահից և եկող կյանքի դար:
17

Չնայած եպիսկոպոսների Խորհուրդը ընդունեց Նիկիայի
Համոզմունքը, այնտեղ Երրորդության մասին ոչ մի նշում
գոյություն չուներ:

Մի քանի տասնամյակ շարունակվել է
տարաձայնությունները կապված Հիսուսի բնույթի հետ: 381
թվականին, Կոնստանտինոպոլսում տեղի ունեցավ
երկրորդ Էկումենիկ խորհուրդը:¹⁸ Խորհուրդը որդեգրեց
Նիկիայի Համոզմունքը, հայտնելով, որ Հիսուսը և Աստված
համահավասար, համահավերժ են և Սուրբ Հոգու
աստվածությունը: Երրորդության ուսմունքը հաջորդ
տասնհինգ դարերի համար դարձել է պաշտոնապես
հաստատված Քրիստոնեական հավատքի հիմնաքար:

Նշում. Ինչպես «Տիրոջ Աղոթքը» (Աստվածաշունչ,
Մատթեոս 6:9-13), բոլոր Հռոմեական Կաթոլիկները պետք է
հիշատակեն «Նիկիայան Համոզմունքը», որը նրանք
ներառում են իրենց աղոթքների մեջ:

Թեոդոսիոս կայսրը Քրիստոնեության հավատքը դարձրեց
կայսերական հրամանի նյութ:

¹⁷ Վիկտոր Պոդոս Ուիրուիլ «Հիսուս Քրիստոսը Աստված չէ»
Ամերիկյան Քրիստոնեական Մամուլ, Նյու Քնքստուիլ, Օհայո, էջ. 26-27

¹⁸Բ. Կ, Կուպեր, Եկեղեցին Պատմության մեջ (Գրանդ Ռափիդս, Ուիլ.
Բ. Երդմանի Հրատարակչատուն, էջ. 128, Տես, Իբիդ էջ. 25)

«Մեր կամքն է, որ բոլոր մարդիկ, ովքեր Մեր իշխանության տակ են, կիրառեն այն կրոնը, որը աստվածային Պետրոս Առաքյալը փոխանցեց Հռոմեացիներին:

Մենք պետք է հավատանք Հոր, Որդու և Սուրբ Հոգու միակ Աստվածությանը, հավասար վսեմության և Սուրբ Երրորդության գաղափարի ներքո:

Մենք հրամայում ենք, որ այն մարդիկ, ովքեր հետևում են այս կանոնին, ընդունեն Կաթոլիկ Քրիստոնյաների անունը: Մնացածին, ամեն դեպքում, ում Մենք որոշել ենք խելագար և հոգեկան, պետք է պահպանեն հերետիկ դոգմաների խայտառակությունը, նրանց հանդիպման վայրերը չպետք է ստանան եկեղեցիների անուն և նրանք պետք է խոցվեն առաջինը աստվածային վրեժով և երկրորդ, Մեր սեփական նախաձեռնության հատուցմամբ: Մենք պետք է ենթադրենք ըստ աստվածային դատաստանի»:¹⁹

Հետագայում, Մարիամի պաշտանմունքի ուսմունքը որպես «Աստծո մայր» և «Աստծո կրող» նույնպես ձևավորվել է 553 թվականի Կոնստանտինոպոլսի Երկրորդ Խորհրդի ժամանակ և ավելացել է «Հավերժ Կույս» տիտղոսը: «Ուղղափառ Եկեղեցու աղոթքների և օրհներգերի մեջ, Աստծո մոր անունը այնքան հաճախ է վկայակոչվել, որքան Քրիստոսի և Սուրբ Երրորդության անունները» «Հռոմեական Կաթոլիկ ուսմունքի մեջ, Մարիամը, Աստծո մայրը, նույնականացվում է աստվածային Իմաստության կերպարի հետ: Աստծո մոր աստվածացման ընթացքը այստեղ ավելի հեռու է գնացել, որտեղ Մարիամին

¹⁹ Բամբեր Գասկո. «Քրիստոնյաները», Գրանադա Հրատարակչություն 1976, Ֆրոգմոր, Սուրբ Ալբանս, Հեքց A12 2NF և 3 Վերին Ջեյմս փողոց, Լոնդոն Wir 4BP, էջ. 9

վերաբերվում են ինչպես աստվածային հիպոթեզ, էություն, երկնային Իմաստության կերպար»:²⁰

ԳՈՐԾՈՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱԶԴԵԼ ԵՆ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՎՐԱ

Գործոնները, որոնք ազդել են Երրորդության Ուսմունքի ձևավորմանը, ամփոփվել են 1989 թվականին, Փենսիլվանիայի Ուաթթաուեր և Աստվածաշնչյան Ուղղի հասարակությամբ, ինչ կարելի է համարել Երրորդության ուսմունքի ավետաբեր.

Ողջ հին աշխարհում, այնքան հեռավոր ժամանակաշրջանում, ինչպիսին է Բաբելոնյանը, սովորական էր եռյակներով հեթանոս աստվածների երկրպագումը: Այս կիրառությունը մինչ այդ էլ լայնորեն տարածված էր, Քրիստոսի ժամանակաշրջանում և հետո Եգիպտոսում, Հունաստանում և Հռոմում: Առաքյալների մահից հետո, այսպիսի հեթանոս հավատքները սկսեցին ներխուժել Քրիստոնեություն:

Պատմաբան Ուիլլ Դուրանթը նկատում է. «Քրիստոնեությունը չոչնչացրեց հեթանոսությունը, այն որդեգրեց այն.... Եգիպտոսից եկավ աստվածային երրորդության գաղափարները»: Եվ «Եգիպտոսյան Կրոն» գրքի մեջ, Զիգֆրիդ Մորենցը նշեց.

²⁰ Բրիտանիկա Հանրագիտարան, Մակրոպեդիա, հատոր 4, Քրիստոնեություն, էջ. 483

Երրորդությունը եզիպտական աստվածաբանների մեծագույն մտահոգությունն էր: «Երեք աստվածներ միացվել էին և նրանց վերաբերում էին որպես մեկի, դիմելով եզակի թվով: Այս կերպ Եզիպտական կրոնի հոգևոր իշխանությունը ցույց տվեց Քրիստոնեական աստվածաբանության հետ ուղղակի կապը»: Ալեքսանդրիայում

Ուստի, Ալեքսանդրիայում, երրորդ դարի ավարտի և չորրորդ դարի սկզբի Եզիպտական եկեղեցականները, ինչպիսին էր Աթանասիուսը, արտացոլեց այս ազդեցությունը, քանի որ նրանք ձևավորեցին գաղափարներ, որոնք առաջնորդում են Երրորդությանն: Նրանց սեփական ազդեցությունը այնքան տարածվեց, որ Մորենցը ենթադրեց որ. «Ալեքսանդրյան աստվածաբանությունը միջնորդ է հանդիսանում Քրիստոնեության և Եզիպտական կրոնի ժառանգության միջև»:

Կրոնի և Էթիկայի Հանրագիտարանի մեջ Ջեյմս Հասթինգը գրում է. «Հնդկական կրոնի մեջ, մենք հանդիպում ենք Բրահմայի, Շիվայի և Վիշնույի Երրորդության խումբին: Եզիպտական կրոնի մեջ Օսիրիսի, Իսիսի և Հորոսի Երրորդության խմբին ... Ոչ էլ միայն պատմական կրոնների մեջ ենք մենք Աստծուն դիտում որպես Երրորդություն: Մասնավորապես հիշեցնում է Գերագույն կամ Առավելագույն Իրականության նոր-Պլատոնական տեսակետը»: Որը «տրիադիկ կերպով ներկայացվել է»:

Կրոնական Գիտելիքի Նոր Շաֆֆ-Հերցոգ Հանրագիտարանը, ի ցույց է դնում Հունական փիլիսոփայության ազդեցությունը. «Լոգոսի և Երրորդության ուսմունքները իրենց ուրվագիծը ստացել են

Հունական Հայրերից, ում... վրա ուղղակի կամ անուղղակի ավելի ազդեցություն էր ունեցել Պլատոնական փիլիսոփայությունը... Տվյալ աղբյուրից Եկեղեցի սողոսկած սխալները և աղավաղումները, ժխտել չի կարելի»:

Առաջին Երեք Դարերի Եկեղեցին ասում է.

«Երրորդության ուսմունքը ձևավորվել է աստիճանաբար և համեմատաբար ուշ; ... ծագման աղբյուրը Հրեական և Քրիստոնեական Գրերից ամբողջովին օտար է; ...այն Քրիստոնեություն են աճեցրել և պատվաստել, Պլատոնականացված Հայրերը»:²¹

Երեք դեմքերով աստվածների քանդակները հայտաբերվել են աշխարհի տարբեր մասերում (օր. Կամբոջիա {Բուդդայի երեք աստվածազուխը, 12-րդ դար}; Իտալիա, {Երրորդություն, 15-րդ դար}; Նորվեգիա {Երրորդություն Հայր, Որդի, Սուրբ Հոգի 13-րդ դար}; Ֆրանսիա {Երրորդություն 14-րդ դար}; Գերմանիա {Երրորդություն 19-րդ դար}; Հնդկաստան {Եռազուխ Հինդու աստված 7-րդ դար} ;Ս. Ֆալմիրա{ լուսնի աստծո երրորդությունը, Երկինքների Տերը, արևի աստված 1 –ին դար} ; Բաբելոն {Իշտարի, Սին Շամաշի Երրորդություն 2-րդ հազարամյակ} և Եգիպտոս {Հորոսի, Օսիրիսի, Իսիսի Երրորդություն, 2-րդ հազարամյակ}):²²

²¹ Աստվածաշունչը և Փենսիլվանիայի Ուղղու Հասարակությունը. Արդյո՞ք դուք պետք է հավատաք Երրորդությանը:(1989) Միջազգային, Աստվածաշնչյան Ուսանողների Կազմակերպություն, Բրուկլին, Նյու Յորք, ԱՄՆ էջ. 11

²² Իբիդ, էջ. 1

ԵՐՐՈՐԴԱԿԱՆՆԵՐԻ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱՑՈՒՄԸ

Քրիստոնեական Հսկաները, Երրորդությունը փրկելու նպատակով, ամեն հնարավոր կերպով փորձում էին արդարացնել ուսմունքը: Ամեն դեպքում, բոլոր իմացյալ տրամաբանությունները և մարդկային պատճառները սպառելուց հետո, խեղճորեն ձախողվեցին և այն հայտարարեցին որպես «Առեղծված»: Հետևյալները որոշակի հայտարարություններ են, որոնք արել են Եկեղեցիների դեկավարները, պատվելի Քրիստոնյա Աստվածաբանները և հայտնի հեղինակները, ովքեր համարձակ կերպով եկել են պաշտպանելու այս խենթությունը.

«Ամենասուրբ Երրորդությունը առեղծված է, բառի ամենախիստ իմաստով: Հայտնությունը սովորեցնում է, որ միայն մեկ պատճառով չենք կարող ապացուցել Եռակի Աստծո գոյությունը: Եվ նույնիսկ առեղծվածի գոյության հայտնությունից հետո, մարդու բանականությունը չի կարող ընդունել, թե ինչպես Երեք Անձ դրվել են մեկ Աստվածային Բնույթի մեջ»:²³

Կաթոլիկ գիտնականներ Կարլ Ռահները և Հերբերտ Վորգիմլերը իրենց Աստվածաբանական Բառարանի մեջ հայտնում են. «Երրորդությունը առեղծված է ... խիստ իմաստով ..., որը հայտնի չէր դառնա առանց հայտնության

²³ Վերանայված Ջ. Ֆ. Դե Գրույթ, Կաթոլիկ ուսմունք էջ. 101 (Տես –Տիկ. Ուլֆաթ, Ազիզ –Ուս- Սամադ. «Իսլամը և Քրիստոնեությունը», 1984, Իսլամական Հետազոտությունների Նախագահություն և Քարոզչություն, Ռիադ, Սաուդյան Արաբիայի Թագավորություն էջ. 30)

և նույնիսկ հայտնությունից հետո, չէր կարող լինել ամբողջովին հասկանալի»:

«Այսպիսի առեղծվածային դոգման ենթադրում է Աստվածային հայտնություն»: (Կաթոլիկ Հանրագիտարան)

«Աստված մեկն է և Աստված երեքն է: Քանի որ գոյություն չունի նմանատիպը արարածների մեջ, մենք չենք կարող հասկանալ, սակայն միայն ընդունել այն»: (Մոնսինյոր Յուզին Քլարք)

«Մենք գիտենք, որ այն շատ խորը առեղծված է, որը մենք չենք կարող հասկանալ»: (Կարդինալ Ջոն Օ,Քոնոր)

«Խորհրդավոր առեղծվածը Աստծո Երրորդությունն է»: (Հովհաննես Պողոս II Պապ)²⁴

ՎԱՂ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ ՉԵՆ ՈՒՍՈՒՑԱՆԵԼ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՈՒՍՍՈՒՆՔԸ

«Հայր Աստված», «Որդի Աստված» և «Սուրբ Հոգի Աստված» ոչ միայն Քրիստոնեության հոմանիշ են, այլև Քրիստոնեական հավատքի հիմքը:

Ամեն դեպքում, այս հավատքը համարվելով Քրիստոնեական կրոնի սկզբնաղբյուր հայտնի չէր կամ Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) և վաղ Քրիստոնյաները կողմնակից չէին: Առաքելական Հայրերը և հաջորդ սերունդները մինչ 4-րդ դարի վերջին քառորդը երբեք չեն մտածել Աստծո

²⁴ Աստվածաշունչը և Փենսիլվանիայի Ուղղու Հասարակությունը. Արդյո՞ք դուք պետք է հավատաք Երրորդությանը: (1989) Միջազգային Աստվածաշնչի Ուսանողական կազմակերպություն, Բրուկլին, Նյու Յորք, ԱՄՆ էջ.4

Երրորդության մասին: Նրանք հավատում էին Ամենագոր, Ամենագետ և Մշտագո Արարչի, Ում պետք է երկրպագել:

Քրիստոնեական հեղինակություններից վերցված հետևյալ վավերական զեկույցները խոսում են իրենց փոխարեն.

«Մեկ Աստված երեք անձանց մեջ «ձևակերպումը չէր ստեղծվել, որպեսզի հաստատվի Քրիստոնեական կյանքում և իր հավատքի դավանանքի մեջ, մինչ 4-րդ դարի ավարտը: Սակայն սա Երրորդության ուսմունքի վերնագրի առաջին հայցն է, որը ունեցել է առաջին պնդումը: Առաքելական հայրերի շրջանում գոյություն չունեին այսպիսի մտածելակերպի կամ տեսանկյունի նույնիսկ հեռավոր որևէ մոտեցում»:²⁵

Երրորդության ուսմունքը քրիստոնյաների մեջ հաստատվեց Հիսուսից մոտ երեք հարյուր տարի անց: 70-ից մինչ 115 թվականները ընկած ժամանակահատվածում գրառված Կանոնական Ավետարանների մեջ Երրորդության ոչ մի հղում գոյություն չունեն: Նույնիսկ Սուրբ Պողոսը, ով Քրիստոնեություն ներմուծեց շատ օտար գաղափարներ, ոչինչ չգիտեր Եռակի Աստծո մասին: Նոր Կաթոլիկ Հանրագիտարանը (ունենալով պաշտոնյաների երաշխավորությունը, նշելով պաշտոնական խրախուսանք) ընդունում է, որ Երրորդության ուսմունքը անհայտ էր վաղ Քրիստոնյաներին և որ այն ձևավորվել է 4-րդ դարի վերջին եռամսյակում.

²⁵ Նոր Կաթոլիկ Հանրագիտարան (1967) Մշակույթ.«Սուրբ Երրորդությունը» Հատոր 14, էջ.299 (Տես –Տիկ, Ուլֆաթ Ազիզ-Ուս-Սամադ. «Իսլամը և քրիստոնեությունը», 1984 Իսլամական Հետազոտությունների և Քարոզչության Նախագահություն, Ռիադ, Սաուդյան Արաբիայի թագավորություն, էջ.32)

«20-րդ դարի երկրորդ կեսին դժվար է առաջարկել հայտնության պարզ, օբյեկտիվ և ուղղակի հաշիվը, Երրորդության առեղծվածի ուսմունքային գնահատումը և աստվածաբանական մշակումը: Երրորդական քննարկումները, ինչպես նաև Հռոմեական Կաթոլիկները, փոքր-ինչ անկայուն ուրվագիծ են ներկայացնում: Ստացվեց երկու բան: Գոյություն ունի գրերի և Աստվածաշնչյան աստվածաբանների ճանաչում, որը ներառում է կաթոլիկների անընդհատ աճը, և այն, որ չպետք է խոսել Երրորդականության մասին Նոր Կտակարանում, առանց լուրջ որակավորման: Գոյություն ունի նաև ուսմունքի սերտորեն զուգահեռ ճանաչում պատմաբանների և համակարգված աստվածաբանների կողմից, որ երբ որևէ մեկը խոսում է անվերապահ Երրորդության մասին, ապա նա տեղափոխվում է Քրիստոնեական աղբյուրներից դեպի, ասենք 4-րդ դարի վերջին քառամսյակը: Դա տեղի է ունեցել միայն այնուհետ, ինչ կարելի է կոչել Երրորդության ուսմունքի նույնատիպություն «մեկ Աստված, երեք անձիք» դարձավ Քրիստոնեական կյանքի և մտքի մանրակրկիտ յուրացվող երևույթ»²⁶

«Սկզբնական շրջանում քրիստոնեական հավատքը Երրորդական չէր... այդպես չէր նաև առաքելական և ենթա-առաքելական դարաշրջաններում, ինչպես արտացոլվել է Նոր կտակարանի և ավելի վաղ Քրիստոնեական գրերի մեջ»: (Կրոնի և Էթիկայի Հանրագիտարան)

²⁶ Նոր Կաթոլիկ Հանրագիտարան (1967) մշակույթ «Սուրբ Երրորդությունը» Հատոր 14 էջ. 295 (Տես Իբիդ, էջ.31)

«Վաղ Քրիստոնյաները, ամեն դեպքում, սկզբնական շրջանում Երրորդության գաղափարը չէին կարծում ընդունել որպես իրենց հավատք: Նրանք իրենց նվիրվածությունը տալիս էին Աստված Հորը և Հիսուս Քրիստոսին, Աստծո Որդուն և նրանք ճանաչեցին Սուրբ Հոգին, սակայն ոչ մի գաղափար գոյություն չունեիր, որ այս երեքը փաստորեն Երրորդություն են, համահավասար և միացյալ Մեկի մեջ»: (Հեթանոսությունը Մեր Քրիստոնեության մեջ²⁷)

ԱՐԴՅՈ՞Ք ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Մինչ Աստվածաշունչը քարոզում և հավատում են նրան որպես Աստծո Խոսք, այն չի ներառում Երրորդության ուսմունքի նշանավորությունը: Եթե Երրորդության այս ուսմունքը լինեիր ճշմարիտ, այն պարզորոշ ներկայացված կլինեիր Աստվածաշնչի մեջ, որովհետև, մենք պետք է ճանաչենք Աստծուն և Նրան երկրպագելու ձևը:

Աստծո մարգարեներից ոչ ոք, սկսած Ադամից, մինչ Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն), չունեին Երրորդության կամ Եռակի Աստծո գաղափարը: Աստծո Մարգարեներից ոչ ոք այս երևույթի մասին ոչ մի քողարկված հայտարարություն չի արել, կամ Աստվածաշնչի Հին կամ Նոր կտակարաններում գոյություն չունի որևէ հղում, որը հաստատում է այս ուսմունքը: Ուստի, տարօրինակ է, որ ոչ Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն)

²⁷ Աստվածաշունչը և Փենսիլվանիայի Ուղղու Հասարակությունը. Արդյո՞ք դուք պետք է հավատաք Երրորդությանը: (1989) Միջազգային Աստվածաշնչի Ուսանողական կազմակերպություն, Բրուկլին, Նյու Յորք, ԱՄՆ էջ.6

ոչ էլ իր աշակերտները չեն խոսել Աստվածաշնչի մեջ գոյություն ունեցող Երրորդության մասին: Հակառակը, Հիսուսն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Տերը, մեր Աստվածը, Տերը մեկն է...» (Աստվածաշունչ Մարկոս 12:29) Եվ, ըստ Սուրբ Պողոսի. «Իսրայելի մարդիկ, լսե՛ք այս խոսքերը. Հիսուսը Նազովրեցին, Աստծո կողմից հաստատված մարդ է հզոր արարքներով և հրաշքներով և նշաններով, որը Աստված է արել նրա միջոցով ձեր մեջ, ինչպես դուք ինքներդ գիտեք»: (Աստվածաշունչ Գործք 2:22)

Վերոհիշյալ տարբերակները ինքնին խոսում են իրենց մասին: Ինչու՞ է պետք անհանգստանալ մի ուսմունքի համար, որը լի է մոլորություններով, երբ Քրիստոնեության գիտնականները, բարձրաստիճան հոգևորականները չեն կարող հասկանալի մեկնաբանել կամ բացատրել այն:

Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) իրոք, մարգարեացրեց այս խնդիրը. (Աստվածաշունչ, Մատթեոս 15:8-9) - «Այս մարդիկ պատվում են ինձ իրենց շուրթերով, սակայն իրենց սրտերը հեռու են ինձանից, գուր եմ նրանք երկրպագում ինձ, ուսուցանելով որպես ուսմունք, մարդու պատվիրանները»:

Որպես լրացում, Սուրբ Պողոսը հետևել է դրան. (Աստվածաշունչ, Տիմոթեոս 2 4:3-4) «Քանի որ գալիս է ժամանակը, երբ մարդիկ չեն հանդուրժի ողջամիտ ուսմունքը, սակայն, քորելով ականջները, նրանք կհավաքեն իրենց համար ուսուցիչներ, ովքեր համապատասխանում են իրենց իսկ ճաշակին և կշրջվեն ճշմարտությանից և կզարմանան առասպելների վրա»:

Այնուհետ, նույնպես մենք ընթերցում ենք (Աստվածաշունչ Տիտոս 2:26) «Նրանք հայտնում են, որ ճանաչում են Աստծուն, սակայն, նրանք ժխտում են նրան, իրենց

արարքներով, նրանք նողկալի, անհնազանդ, բարի արարքին անհամապատասխան են»:

Այս երկընտրանքի մեջ, Քրիստոնեական մեծ մտավորականները սպառել են ամբողջ տրամաբանությունը, որպեսզի վստահություն տան Երրորդության ուսմունքին, սակայն այն նողկալի կերպով ձախողվել է և հետագայում հայտարարվել է առեղծված: Ամեն դեպքում, Ամենագոր Աստծո երկրպագությունը չի կարելի փոխզիջել: Նա մարդուց պահանջում է երկրպագել միայն Իրեն, ըստ Իր Աստվածային Ուղղորդության: Լինելով Ինքնին Արդար, ստացվում է, որ Իր արդարությունը պահանջում է, որ Իր Ուղերձը լինի պարզ և պարզունակ: Ուսմունքները որպես ամբողջություն, պետք է զուրկ լինեն որևէ սխալից, սնոտապաշտությունից և շփոթմունքից: Այն պետք է կատարյալ ճշմարտություն լինի, որը միշտ կարող է դիմակայել գիտության ցանկացած մարտահրավերի, ներառելով գիտության բնագավառի մարդկային հայտնագործությունները: Քանի դեռ Երրորդության ուսմունքը ինքնին «առեղծված» է, որպես այդպիսին չի կարող դիտվել Աստծո ոգեշնչում: Աստվածաշունչն ասում է. «Քանի որ Աստված շփոթմունքի Աստված չէ, այլ խաղաղության»: (Աստվածաշունչ, Կորնթացիներ 1 14:33)

ՀՐԵԱ ԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Կրոնի հանրագիտարանը ընդունում է.

«Այսօր աստվածաբանները համամիտ են, որ Հրեական Աստվածաշունչը չի ներառում Երրորդության ուսմունքը»: Եվ, Նոր Կաթոլիկ Հանրագիտարանը նույնպես ասում է.

